# ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳՐԱՆ-ՊՐԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԹԻՄԵՐԸ ԳՐԱՎԵԼ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ՏԵՂԵՐԸ

18.09.2021 19:15



Այսօր՝ 2021թ-ի սեպտեմբերի 18-ին Հայաստանի շախմատի ակադեմիայում տեղի  ունեցավ կորպորացիաների շախմատի Գրան-Պրի մրցաշարի երկրորդ փուլը:

Խաղին մասնակցում էին նաև ՀՀ փաստաբանների պալատի հավաքական թիմերը:

Գրան-Պրիի երկրորդ փուլում Փաստաբանների թիմ 1-ը գրավեց երկրորդ տեղը և արժանացավ արծաթե մեդալի, իսկ փաստաբանների թիմ 2-ը զբաղեցրեց 4-րդ տեղը:

Երկրորդ փուլի հաղթող ճանաչվեց Սոֆթ Կոնստրակտ թիմը:

Խաղին մասնակցում էին 18 թիմ, որոնց թվում՝ Սիներջի, Հանրային հեռուստատեսություն, ՎՏԲ Բանկ, ՀԷՑ և այլն:

Կորպորացիաների շախմատի Գրան-Պրիի հաջորդ փուլը տեղի կունենա 2021թ-ի հոկտեմբերի 31-ին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })